

32. Մենք պան մ'ունինք, կացող էկողուն ծեռքը կը պագնէ : (Դրան շախշախ)
33. Հարս մը ունիմ, որ եկող վացողին ձեռքը կը պագնէ : (Դրան բռնակ)

4.- ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐ ԿԻՒՐԻՆԻ

- Այրած հաց ուտողը դրամ կը դտնէ :
- Անլուայ երեսով հացին ամանին չեն մօտենար, պէրէքէթը կը փախի :
- Աւաղ Չորեքշաբթի առաւօտ խիստ կանուխ՝ տնեցիներէն մին, առանց ուրիշին հետ խօսելու, կ'ելլէ տանիքները կ'աւլէ, որպէսզի նոյն տարիին մէջ շարիք մը չպատահի իրենց :
- Գեղեցիկ տղայ մը շար նազարէ (17) պահելու համար, անոր օձիքը փուշ մը կը խոթեն :
- Գիշերը ծիթ ծամողը՝ մեռելի միտ ծամած կ'ըլլայ :
- Գլխէն կտրուած մազերը կամ կ'այրեն, կամ պատին ծակը կը խոթեն, որովհետեւ եթէ կոխկոտուի դուրսը կը ցաւի :
- Եթէ աղջիկ մը եղունդով դետինը փորէ, հայրը կը մեռնի, եթէ կին մը փորէ՝ էրիկը կը մեռնի :
- Եթէ անծեղը կանչէ, նոյնպէս եթէ ափին մէջը կամ կոկորդը մարմաջէ, լուր կու գայ ճամբորդէն :
- Եթէ աջ աչքը խաղայ՝ կամ ճամբորդը կու գայ կամ լուր մը : Իսկ եթէ ձախ աչքը խաղայ՝ աղէկի նշան չէ :
- Եթէ դիշեր ատեն հայելիին նայիս, «կէմբն պաքմիշ կ'ըլլայ» (նաւը կ'ընկըզմի) կ'ըսեն :
- Եթէ հաւը խօսի աղէկ չեն սեպեր, իսկոյն կը մորթեն դայն :
- Եթէ նորածինը ծնած պահուն ափը բացած ըլլայ, կը նշանակէ թէ առատաձեռն պիտի ըլլայ :
- Եթէ պարսպ օրրանը օրօրեն, նոյն օրրանը պառկող տղան կը մեռնի :
- Երբ գարնան առաջին անգամ երկինքը որոտայ, կոնակներն դետին տուած կը պառկին, որպէսզի «ղուլինճ» չուենան :
- Երբ կատուն լուացուի, հիւր դալու նշան է :
- Երբ կերակուրի վրայ օտարական մը դայ, «Ղայնանադ քեզի ամուր կ'ուզէ էդերմ» (18) կ'ըսեն :
- Ճրագին պատրոյգը երբ քիթ բռնէ աղտեղութենէ, կը նշանակէ թէ հիւր պիտի գայ :
- Երբ մէկը նստած տեղը բան մը կորսնցնէ՝ եւ դտնելու համար ոտքի ելլէ ու դտնէ՝ «Սառանան պոյդ չափեց» կ'ըսեն :
- Երբ մէկուն մօտ շունը ոռնայ, կը կարծեն թէ այն տան մէջ մահ պիտի պատահի. ուստի նոյն տան մէջ գտնուողները կամ ոտնաման մը երեսն ի վար կը դարձնեն, եւ կամ դանակ մը դետին կը ցցեն, որպէսզի չի վնասուին ոռնոցէն :
- Երբ նորածին մանկան մօր կաթը նուազի, խաշնարածին հաց մը կու տան, զոր մինչեւ իրիկուն հետը պտղացնելէն հտք՝ կը յանձնէ նոյն մօրը, որ դայն ուտելով կաթը առատանայ :

17) Փորձանքէ, վտանգէ : 18) Եղիք, կ'երբի :

- Երբ ոտք ելած մանկիկ մը կուռուշ (19) (սողալով) կ'երթայ, նշան է թէ ճամբորդէն լուր պիտի գայ:
- Երբ սաստիկ կարկուտ տեղայ՝ թոնիրին խաչ երկաթը դուրս կը նետեն խաչակնքելով եւ «Տէր, դու խէրավ անցնիս» ըսելով:
- Թոնիրի առաջին անգամ եփած հացը ուտողին կինը կը մեռնի:
- Ծաղկազարդի Կիրակին ամէն տուն հատիկ (կովլա-խաչած ցորեն) կը խաչեն, այդ օր հատիկ չխաչողը՝ շան դուրս խաչած կ'ըլլայ: —
- Կերակուրի ամանը սկրթելով փայլեցնողին աղջիկը գեղեցիկ կ'ըլլայ:
- Կերակուր ուտելու ժամանակ մէկուն ձեռքէն ինկած պատառը ուրիշը կ'առնէ, որովհետեւ եթէ ինքն առնէ՝ ճամբորդը ետ կ'երթայ:
- Կերակուրի սեղանը երկար ատեն փռուած չեն թողուր, «սեղանը կը դողայ, մեղք է», ըսելով:
- Կտրուած եղունդը ամէն տեղ նետելը աղէկ չեն սեպեր, այլ ընդհանրապէս դրան ետին կը նետեն, ըսելով, «առ ուզուցիս, տուր ըռչակիս»:
- Հացը դանակով կտրելը մեղք համարած են:
- Հազած լաթին վրայէն բան կարել չեն տար, որ դուցէ տէրը զուրի (զըրպարտութեան) ենթարկուի:
- Մկրատին բերանը բաց չեն թողուր, վախնալով թէ թշնամիի բերանն ալ այսպէս կը բացուի:
- Նշանածին ձայնը լսող աղջիկը արքայութեան երես չի տեսներ:
- Նորածին կաթնկեր տղայ մը երբ իր մատները ծծէ, խելօք (բարեբարոյ) կ'ըլլայ:
- Նորածին մկրտելու համար եկեղեցի տարուած ատեն, հետն ալ շունիճով (ըպրըքով) տաք ջուր կը տանին, նոյն շունիճը տանող տղան՝ եթէ ետին նայի, երախան շիլ կ'ըլլայ:
- Նոր տարիի օրը (Յունուար 1ին) փոնգտացողին «տարիս զնտլեց» (զըրտորեց) կ'ըսեն:
- Շաբաթ իրիկունները տուներու մէջ առհասարակ խունկ կը ծխեն. խունկ չծխուած տունը սատանայի բնակարան կ'ըլլայ:
- Ոջիւր սղ դուրս նետելու չէ, շունի կը փոխուի ու կը խածնէ:
- Զմկրտուած տղեկի մը երեսն համբուրողին ակոսն չի ցաւիր:
- Պառկած մէկու մը վրայէն անցնելու չէ, կարճահասակ կը մնայ:
- Տապակին մէջէն կերակուր ուտողի հարսնիքին օրը անձրեւ կու գայ:
- Տէրնտեսի (Տեառնընդառաջ) երեկոյին խածաղ (բոհրած ցորեն) ուտողը մտամոլոր (մոռացկոտ) կ'ըլլայ:
- Տէրնտեսի նախընթաց իրիկունը, սովորութիւն է կրակ վառել, ի ներկայութեան ժողովրդեան, ոմանք այդ վառած փայտէն տուն կը տանին հետերնին, որպէսզի տան մէջ գտնուած հաւերը սկսին հաւկիթ ածել:
- Փիլաւ ուտողի մը դգալին փիլաւը եթէ փլչի, նոյն մարդը կը մեռնի:
- Քառասունքի մէջ եղած նորածին տղու մը տունը եթէ բեռցուած անասուն մը գայ՝ տղեկը դուրս կը հանեն որ «քառասունք-կոխ» չըլլայ:
- Քառասունքի մէջ եղող կին մը ուրիշին տան սեմէն ներս չ'անցնիր, այլսպէս՝ «սատաման կը շառփէ» (կը գարնէ):

Կիւրիս, 1898

Հ. Կ. ՏԷՄԻՐՃԵԱՆ

19) Սողալով առաջամալ (պգտիկներու կ'ըսեն):